

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ



ԾՐԱԳԻՐ

«ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»

Ասպիրանտուրա

ԵՐԵՎԱՆ

Քննարկված է՝ Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի
Գիտակրթական միջազգային կենտրոնի «Ասպիրանտուրայի» բաժնի 2020 թ.
_____ № ____ նիստում:

Հաստատված է՝ Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի
Գիտակրթական միջազգային կենտրոնի «Ասպիրանտուրայի» բաժնի 2020 թ.
_____ № ____ նիստում:

Դեկան՝ Ն. Ռ. Հակոբյան

հ.գ.դ., պրոֆեսոր

Ամբիոնի վարիչ՝ -----
ստրագրություն

Կազմող՝ Ա. Ալեքսանյան -----
ստրագրություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ծրագրի նպատակն է հետազոտության մեթոդների ներկայացումը, ինչպես նաև ասպիրանտների կողմից դրանց կիրառման գործնական հմտությունների ձեռքբերումը:

2. Ծրագրի խնդիրներն են՝

- ասպիրանտներին տրամադրել տեսական գիտելիքներ հետազոտության մեթոդաբանության վերաբերյալ,
- ներկայացնել ակադեմիական գրելաձևի չափանիշները՝ ներառյալ գրագողության և հղման կարգերը,
- տրամադրել գիտելիքներ հետազոտություններում կիրառվող որակական և քանակական մեթոդների վերաբերյալ,
- ներկայացնել տեսական և էմպիրիկ մակարդակի մեթոդները,
- ասպիրանտների մոտ զարգացնել վերլուծական և հետազոտական հմտությունները,
- ձևավորել տվյալների բազաներից օգտվելու կարողություններ,
- ուսուցանել SPSS և Excel ծրագրերը, որոնք անհրաժեշտ են վիճակագրական տվյալների մշակման և վիճակագրական մեթոդների կիրառման ժամանակ,
- ներկայացնել սոցիալ-տնտեսական, քաղաքական և այլ ոլորտների վերլուծությունների և չափումները համար կիրառվող հիմնական ինդեքսները:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ Առարկայական մոդուլների ուսումնասրության արդյունքում ասպիրանտները

1. Կիմանան

- «Գիտական հետազոտության մեթոդաբանություն» առարկայի ծրագրով նախատեսված տեսական հիմնական նյութը,
- գիտական աշխատանքներ ներկայացնելու հիմնական մոտեցումներն ու ձևաչափը,
- հետազոտության մեթոդների կիրառման մոտեցումներն ու առանձնահատկությունները:

2. Կկարողանան

- սահմանազատել հետազոտության դաշտային և կարհնետային տեսակները, քանակական և որակական մեթոդները, տվյալների առաջնային և երկրորդային աղբյուրները և այլն,
- գնահատել տարբեր երևույթները, գործընթացներն ու իրավիճակները,
- գործնականում կիրառել հետազոտության մի շարք մեթոդներ,
- ներկայացնել ակադեմիական չափանիշներին համապատասխան գիտական աշխատանքներ,
- գործառնացնել տարբեր հասկացություններ,
- առաջադրել հիպոթեզներ և ստուգել դրանք:

3. Կտիրապետեն

- հետազոտության մեթոդաբանությանը և հետազոտության ծրագրի մշակման գիտելիքներին,
- համակարգչային ծրագրերով (SPSS, Excel) տվյալների մշակման և համապատասխան վերլուծությունների իրականացման հմտություններին և գիտելիքներին,
- հետազոտության մեթոդների կիրառման պրակտիկ հմտություններին:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընդամենը՝ 40 ժամ, որից դասախոսություն 22 ժամ, 18՝ սեմինար և գործնական:

ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

| N | Բաժինը, թեման | Պարապմունքների տիպը, ժամերի թիվը | | | Վերջնարդյունք |
|---------------|--|----------------------------------|--------------------|-----------|--|
| | | Դասախոսություն | Սեմինար, գործնական | Բնօրնույն | |
| Թեմա 1 | ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ | 4 | | | |
| | Հետազոտությունների էությունը, նպատակը, խնդիրները, տեսակները և ուղղությունները: | | | | Հետազոտությունների վերաբերյալ տեսական նյութի գիտելիք |
| Թեմա 2 | Հետազոտության ծրագրի մշակումը | 4 | 2 | | |
| | Հետազոտության ծրագրի և աշխատանքային պլանի մշակում: Հետազոտության օբյեկտը և առարկան: Փոփոխականների տեսակները և դրանց փոխկապվածության տարբերակները: Փոփոխականների գործառնացումը, հիպոթեզների առաջադրումը, չափման մակարդակները, սխալները և հուսալիությունը: | | | | Հետազոտության ծրագրի մշակման գիտելիք և կարողություն |

| | | | | | |
|---------------|--|---|---|--|--|
| | Տեղեկատվության ձեռք բերման հիմնական աղբյուրները: Տեղեկատվության մշակման և վերլուծության մեթոդների հիմնական խմբերը: | | | | |
| Թեմա 3 | Ակադեմիական գրելաձև Գիտական աշխատանքները ներկայացնելու գիտական չափանիշները և ձևաչափը: Գիտական աշխատանքի, այդ թվում նաև ատենախոսության հիմնական կառուցվածքը: Գրագողությունը հիմնախնդիրը: Հղման ներտեքստային և տողատակային կարգերը: | 2 | 2 | | Գիտական աշխատանքներ ներկայացնելու գիտելիք և կարողություն |
| Թեմա 4 | Հետազոտության որակական մեթոդները Խորքային հարցազրույցն ու ֆոկուս խմբերի մեթոդը, SWOT-անալիզը, փորձագիտական հարցումը: Այս թեմայի շրջանակներում ասպիրանտները ոչ միայն տեսականորեն կծանոթանան վերը նշված մեթոդներին, այլև գործնականում կկիրառեն դրանք: | 2 | 2 | | Հետազոտության որակական մեթոդների մասին գիտելիք, գործնական կիրառման հմտություն և կարողություն |
| Թեմա 5 | Հետազոտության էմպիրիկ մեթոդները Դիտարկումն ու գիտափորձը: Դիտարկումը որպես հետազոտության էմպիրիկ մեթոդ: Դիտարկման տեսակները: Գիտափորձի որպես էմպիրիկ մեթոդի էությունը: Գիտափորձի փուլերը: | 2 | 2 | | Հետազոտության մեթոդների մասին գիտելիք, գործնական կիրառման հմտություն և կարողություն |
| Թեմա 6 | Հետազոտությունների վիճակագրական մեթոդները. միաչափ բաշխվածության վերլուծությունը Նոմինալ, կարգային և ինտերվալային չափման մակարդակները: Դիսպերսիայի և վարիացիայի գործակցի որոշումը, քվարտիլային միջակայքերի և քվարտիլային ռանգերի սահմանումը, ստանդարտ շեղումը կամ միջին քառակուսային շեղումը որպես միջինի շուրջ ցրվածության չափման եղանակներ՝ նոմինալ, կարգային և ինտերվալային մակարդակներում: Մոդայի, միջնաթվի և միջին թվաբանականի որոշումը որպես միջին մեծության հաշվարկման եղանակներ: Այս թեմայի շրջանակներում ասպիրանտները ոչ միայն տեսականորեն ծանոթանում են վերը նշված մեթոդներին, այլև գործնականում կիրառում են դրանք: | 2 | 2 | | Հետազոտության մեթոդների մասին գիտելիք, գործնական կիրառման հմտություն և կարողություն |
| Թեմա 7 | Հետազոտությունների վիճակագրական մեթոդները. Կոռելյացիոն և ռեգրեսիոն վերլուծությունները Կոռելյացիոն և ռեգրեսիոն վերլուծությունների էությունը: Վիճակագրական տեղեկատվության մշակման SPSS ծրագրային փաթեթը: Ծանոթացում և աշխատանք տվյալների բազաների հետ (ՀԲ, Եվրաստատ, ՀՀ վիճակագրական կոմիտե): Այս թեմայի շրջանակներում ասպիրանտները ոչ միայն | 4 | 4 | | Հետազոտության քանակական մեթոդների մասին գիտելիք, գործնական կիրառման հմտություն և |

| | | | | | |
|-------------------------------|--|----------|----|---|--|
| | տեսականորեն կձանդանան վերը նշված մեթոդներին և տվյալների բազաներին, այլև գործնականում կկիրառեն դրանք: | | | | կարողություն |
| Թեմա 8 | Ինդեքսների կառուցման մեթոդը | 2 | 2 | 2 | |
| | Ինդեքսների կառուցման մեթոդի էությունը, քաղաքական և սոցիալ-տնտեսական ոլորտներում կիրառվող ինդեքսները: | | | | Ինդեքսների կառուցման և մոդելավորման վերաբերյալ գիտելիք, գործնական կիրառման հմտություն և կարողություն |
| Ընդամենը՝ 40 ժամ, որից | | 22 | 16 | 2 | |

3. «Գիտական հետազոտության մեթոդաբանություն» առարկայի քննության հարցաշար

1. Հետազոտության էությունը, նպատակները
2. Հետազոտությունների տեսակները
3. Հիմնարար և կիրառական հետազոտությունները
4. Կարիքները և դաշտային հետազոտությունները
5. Առաջնային և երկրորդային հետազոտությունները
6. Քանակական և որակական հետազոտությունները
7. Հետախուզական, նկարագրողական, փորձարարական և պատճառահետևանքային հետազոտությունները
8. Հետազոտության ծրագրի մշակումը (մեթոդաբանական մասը)
9. Աշխատանքային պլանն ու հետազոտության ծրագրի մեթոդական մասը
10. Տեղեկատվության ձեռքբերման աղբյուրներն ու վերլուծության մեթոդները
11. Հասկացությունների գործառնացումը
12. Ներկայացնել տնտեսական զարգացումը բնութագրող էմպիրիկ ցուցանիշներ (5 և ավելի)
13. Ներկայացնել պետության սոցիալական ոլորտը (կենսամակարդակը) բնութագրող էմպիրիկ ցուցանիշներ (առնվազն 5 ցուցանիշ)
14. Ներկայացնել մշակութային ոլորտի զարգացվածությունը բնութագրող էմպիրիկ ցուցանիշներ (5 և ավելի)
15. Ներկայացնել կրթական մակարդակը սահմանող էմպիրիկ ցուցանիշներ (առնվազն 5 ցուցանիշ)

16. Ներկայացնել առողջապահական ոլորտը բնութագրող էմպիրիկ ցուցանիշներ (առնվազն 5 ցուցանիշ)
17. Հիպոթեզի, կախյալ և անկախ փոփոխականների առանձնահատկությունները
18. SWOT-վերլուծություն
19. Խորքային հարցազրույցի մեթոդը
20. Ֆոկուս խմբային քննարկումների մեթոդը
21. Փորձագիտական հարցում
22. Չափման մակարդակները
23. Միաչափ բաշխվածության վերլուծության ընդհանուր բնութագիրը
24. Միջին մեծության և միջինի շուրջ ցրվածության հաշվարկման եղանակները չափման նումինալ մակարդակում
25. Միջին մեծության և միջինի շուրջ ցրվածության հաշվարկման եղանակները չափման կարգային մակարդակում
26. Միջին մեծության և միջինի շուրջ ցրվածության հաշվարկման եղանակները չափման ինտերվալային մակարդակում
27. Կոռելյացիոն վերլուծությունը
28. Ռեգրեսիոն վերլուծությունը
29. Քաղաքական, սոցիալ-տնտեսական չափումներում և վերլուծություններում կիրառվող ինդեքսները

Քննական թեստում ներառված կլինեն նաև գործնական բնույթի հարցեր, օրինակ՝ գործառնացնել հիպոթեզները, տրված տվյալների հիման վրա հաշվարկել մոդան, մեդիանան, ստանդարտ շեղումը, կատարել կոռելյացիոն և ռեգրեսիոն վերլուծությունները և այլն:

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԴԱՍԱԳՐՔԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ**

Հիմնական

1. Creswell J. W. Research Design: Qualitative, Quantitative and Mixed Methods Approaches (3-rd ed.). Thousand Oaks, CA: Sage, 2009.
2. Creswell J. W. Qualitative Inquiry and Research Design: Choosing Among Five Traditions. Thousand Oaks, Calif: Sage Publications Inc, 1998.
3. Ephraim M. Research Methods and Statistics for Cross-Cutting Research: Handbook for Multidisciplinary Research. Oxford: Langaa RPCIG, 2022.
4. Johnson J., Reynolds H. T. with Mycoff J. Political Science Research Methods. CQ Press, 6th edition, 2008.
1. Manheim J., Rich R. Empirical Political Analysis: Research Methods in Political Science. N.Y., 2005.
2. Sabatier P. Theories of the Policy Process. Colorado, 2007.
3. Ахременко А. С. Политический анализ и прогнозирование: учеб. пособие. М., 2006.
4. Волчанский М. Е. Общая характеристика экспериментальных и неэкспериментальных методов в психологии. Методические рекомендации для студентов факультета социальной работы и клинической психологии. Волгоград 2004.
5. Дмитриевич Н.А. 2021. SPSS 15: Профессиональный Статистический Анализ Данных. “Издательский дом "Питер", 2021.
6. Гаврилец Ю. Н., Левада Ю. А., Шубкин В. Н. Проблемы использования количественных методов в социологии // Моделирование социальных процессов. М., 1970.
7. Елисеева И. И. (ред.). Статистика. Учебник. М., 2006
8. Концепции современного естествознания. Под ред. Михайлова Л.А. СПб.: 2008. — 336 с.
9. Мельникова О. Т. Фокус-группы. Методы, методология, модерирование. – М.: Аспект Пресс, 2007. – 320 с.
10. Плотинский Ю. М. Моделирование социальных процессов. М., 2001.
11. Садмен С., Брэдберн Н. Как правильно задавать вопросы: введение в проектирование массовых исследований. / Пер. с англ. – М.: Институт Фонда «Общественное мнение», 2005. – 382 с.

12. Ядов В. А. Социологическое исследование: методология, программа, методы. Самара, 1995.
13. Պետրոսյան Ա., Վիճակագրության ընդհանուր տեսություն: Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2007:

Լրացուցիչ

1. Dunn W. Public Policy Analysis: An Introduction. Englewood Cliffs, 2004.
2. Patton, Michael Quinn. Qualitative Evaluation and Research Methods. Newbury Park, CA: Sage, 1990.
3. Ахременко А. С. Количественный анализ политической динамики: статистический и детерминистский подходы // Вестник Московского университета, серия 12 (Политические науки), №4, 2009.
4. Ахременко А. С. Корреляционный анализ электоральной статистики: некоторые методологические и методические проблемы. // Вестник Московского университета, сер. 12 (Политические науки), №2, 2008.
5. Горелов С. В., Горелов В. П., Григорьев Е. А. Основы научных исследований: учебное пособие. Москва, Берлин: Директ-Медиа, 2016.
6. Садмен С., Брэдберн Н., Шварц Н. Как люди отвечают на вопросы: применение когнитивного анализа в массовых исследованиях. / Пер. с англ. – М.: Институт Фонда «Общественное мнение», 2003. – 304 с.
7. Ферстер Э., Рёнц Б. Методы корреляционного и регрессионного анализа. М., 1983.
8. Ядов В. А. Стратегия социологического исследования. Описание, объяснение, понимание социальной реальности. М., 1998.

ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ: Քննության ձևաչափը առցանց թեստավորում է: Քննական թեստը բաղկացած է ամբողջ դասընթացի տեսական նյութին վերաբերող, ինչպես նաև գործնական բնույթի հարցերից, օրինակ՝ հիպոթեզների գործառնացում, տրված տվյալների հիման վրա մոդայի, մեդիանի, ստանդարտ շեղման հաշվարկում, կոռելյացիոն և ռեգրեսիոն վերլուծությունների կատարում և այլն: Առավելագույն միավորը՝ 5:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

1. ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ՝ ուսումնական նյութեր և ուղղորդիչ և վերլուծական նյութեր: